ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության փորձագետի աշխատանքների

(հաշվետու ժամանակահատված՝ 20.10.2023 թ.-20.04.2024 թ.)

Հարգելի՛ տիկին Գալստյան,

Հաշվետու ժամանակահատվածում, որպես Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. Վարչության 2023 թվականի գործողությունների ծրագրի շրջանակներում, Վարչության աշխատակիցների հետ համատեղ, «Դարձի՛ր, փոփոխության առաջնորդ» խորագրով իրազեկման հանդիպումներ եմ իրականացրել «Քաղաքացիական մասնակցության ակումբ» խմբակների ծրագրով 2023 թվականի դեկտեմբերի 20-ին և 21-ին Տավուշի մարզում հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների հետ:
2. Նյութերի տեղայնացման նպատակով ուսումնասիրել եմ ԵՄ Թվինինգ ծրագրի 1.2 ենթաբաղադրիչի շրջանակներում փորձագետների կողմից մշակված նյութերը:
3. Մասնակցել եմ Հանձնաժողովի 2023 թվականի 2-րդ կիսամյակի գործունեության վերաբերյալ հաղորդման կազմման աշխատանքներին:
4. ԱՄՆ Պետդեպարտամենտի գլոբալ հակակոռուպցիոն հարցերով համակարգող Ռիչարդ Նեֆյուի գլխավորած պատվիրակության՝ Հայաստան այցի շրջանակներում մշակել և տրամադրել եմ կարճ զրույցի թեզեր (անգլերեն) և տեղեկատվություն՝ Վարչությանը վերաբերող էական քայլերի և խնդիրների վերաբերյալ.

5. Ուսումնասիրել եմ ՄԱԿ Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակիկողմից (UNODC) մշակված գլոբալ ուսուցման «eLearning» ծրագիրը, ներկայացրել Վարչությանը վերաբերող առաջարկներ.
6. «Կոռուպցիայի կանխարգելման կարևորությունը և ԿԿՀ-ի դերը» խորագրով, լրագրողների համար նախատեսված աշխատաժողովի ընթացքում իրականացրել եմ կազմակերպչական աշխատանքներ.
7. ԳՐԵԿՈ-ի գնահատման 5-րդ փուլի շրջանակում ներկայացրել եմ Վարչության գործունեությանը վերաբերելի դրույթներ.
8. Իրականացրել եմ ԵՄ Թվինինգ ծրագրի ծրջանակներում հունվարի 23-25-ն ընկած ժամանակահատվածում մանկավարժների վերապատրաստման կազմակերպչական աշխատանքները.
9. Կազմել եմ հունվարի 18-ի՝ մամուլի մշտադիտարկման տեղեկանքը.
10. Մասնակցել եմ Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի՝ ՀՀ արդարադատության նախարարության և «JUREMONIA. Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումների մշտադիտարկում» ծրագրի հետ համագործակցությամբ հունվարի 30-ին կազմակերպված հակակոռուպցիոն կրթության և հանրային իրազեկման հարցերին նվիրված ֆորումին.
11. Ուսումնասիրել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2023թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 3.12-րդ գործողության՝ 2023թ. դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի շրջանակներում 2024-2026 թվականների հաղորդակցման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Արդարադատության նախարարի N 819-Լ հրամանով հաստատված հաղորդակցման գործողությունների ծրագիրը.
12. Ուսումնասիրել եմ ԵՄ Թվինինգ ծրագրի 1.2 ենթաբաղադրիչի շրջանակներում 22.01.2024 թ.-26.01.2024 թ. իրականացված առաքելության հաշվետվությունը.
13. Ներկայացրել եմ առաջարկներ ԵՄ Թվինինգ ծրագրի 2.3 ենթաբաղադրիչի շրջանակներում այն թեմաների ներառման

վերաբերյալ, որոնց, որպես մարտահրավեր, բախվել է Հանձնաժողովը և, մասնավորապես, Վարչությունը.

14. Ուսումնասիրել եմ ԵՄ Թվինինգ ծրագրի 1.3 ենթաբաղադրիչի շրջանակներում փորձագետների կողմից մշակված մոդուլները.
15. Մասնակցել եմ CRRC-ի կողմից անցկացված հետազոտական-վերլուծական գիտելիքների և հմտությունների զարգացման վերապատրաստումների երկշաբաթյա ծրագրին.
16. ԵՄ Թվինինգ ծրագրի 1.3 ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվելիք դասախոսների վերապատրաստման պատշաճ ծրագրի մշակման նպատակով մշակել և փորձագետներին եմ տրամադրել ծրագրի օրինակելի ձև.
17. Ուսումնասիրել եմ «Շուկայական տնտեսության վերաբերյալ զեկույցի»՝ Վարչությանը վերաբերելի հատվածները, ներկայացրել առաջարկներ.
18. Մասնակցել եմ ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում առցանց գործիքների վերաբերյալ փետրվարի 19-23-ը կայացած առաքելության ծրագրին.
19. Մասնակցել եմ «Կրբերանվտանգություն» թեմայով երկօրյա վերապատրաստմանը.
20. Ուսումնասիրել եմ ԵՄ Թվինինգ ծրագրի 1.4 ենթաբաղադրիչի շրջանակներում փորձագետների կողմից մշակված նյութերը, մասնակցել քննարկումներին.
21. Կազմել եմ Դիլիջանի ավագ դպրոցի աշակերտների նախագծային աշխատանքի շրջանակներում իրականացվելիք հանդիպման ծրագիրը և ուսումնամեթոդական նյութերը.
22. Վարել եմ փերվարի 28-ին Դիլիջանի ավագ դպրոցի աշակերտների նախագծային աշխատանքի շրջանակներում Հանձնաժողով կատարած այցի ընթացքում նախատեսված կրթական ծրագիրը.
23. Մասնակցել եմ ԱԺ ներկայացվելիք՝ Հանձնաժողովի տարեկան հաղորդման կազմման աշխատանքներին (2023 թ.).
24. ԵՄ Թվինինգ 2.1 ենթաբաղադրիչի շրջանակներում մասնակցել եմ մարտի 11-15-ը կայացած վերապատրաստումներին.
25. Մշակել եմ «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգը և մեթոդական ձեռնարկը».
26. Մշակել եմ «Նախնական արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն կրթության վերաբերյալ մոդուլի» մեթոդական ձեռնարկը.

27. Կարծիքի տրամադրման նպատակով իրականացրել եմ ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակներում դասախոսների վերապատրաստման նյութերի և փաստաթղթերի ուսումնասիրություն.
28. ԵՄ Թվինինգ ծրագրի 1.3 գործողության շրջանակներում իրանացվելիք դասախոսների վերապատրաստման աշխատանքների ճշգրտման նպատակով մասնակցել եմ 16.04.2023 թ.-ին կայացած առցանց հանդիպմանը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի
և մոնիթորինգի վարչության փորձագետ՝ Լ. Մաթևոսյան

22.04.2024 թ.

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(Հաշվետու ժամանակահատված՝ 20.10.2023թ.-20.04.2024թ.)

Հանձնաժողովի կրթական հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության փորձագետ Լիլիթ Մաթևոսյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 20-ից մինչև 2024 թվականի ապրիլի 20-ն իրականացրած աշխատանքները՝ ըստ ամփոփիչ փուլի արդյունքների գնահատվում է.

1. Բավարար
2. Լավ
3. Գերազանց

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի
Պարտականությունները կատարող՝
Մարիամ Գալստյան

(ստորագրություն)

22.04.2024թ.